ՑՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ[1]

№ 81

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Թերթերը՝ 136։— Պրակները՝ 11, յուրաքանչյուրը 12 թերթից։— Մեծությունը՝ 15,8×11×2 սմ.։— Նյութը՝ սպիտակ հաստ թուղթ։— Կազմը՝ ընկել է, չունի ներկայիս։— Վիճակը՝ վատ։ Սկզբից ընկել են մոտ 194 թերթ, իսկ վերջից էլ թերթ։ Պրակները թուլացել են, իսկ վերջում էլ թղթերը իրար են կպել խոնավությունից։ Վերջին ժամանակներս անխիղճ մի ձեռք դմելիով կտրել և ձեռագրից հանել է բազմաթիվ լուսանցազարդեր, մեծ վնաս պատճառելով ձեռագրին։— Գրությունը՝ միասյուն։— Տողերը՝ 19։— Գծումները՝ ճնշոմով։— Գիրը՝ նոտր գիր։— Զարդագրություն՝ կան բավականի գեղեցիկ գլխազարդեր և լուսանցազարդեր, զարդագրեր և թռչնագրեր։ Գլխատառերը երբեմն կարմիր թանաքով։— Ժամանակը՝ 17-րդ դար։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 84ա.— Մկրտիչին։

№ 82

ԱՊՏԻ ՌԱՀՄԱՆԻ ԹԷՊՐԻԶԵՑԻՈՑ

«ԲԱՆԱԼԻ ԱՍՏԵՂԱՑ»

Թերթերը՝ 102։— Պրակները՝ 6, անկանոն, յուրաքանչյուրը 16—20 թերթ։—Մեծությունը՝ 15,2×10×2,4 սմ.։— Նյութը՝ սպիտակ բարակ թուղթ։— Կազմը՝ կաշեպատ ստվարաթուղթ, որի երկու երեսին կան հասարակ զարդարանքներ սև և կարմիր թանաքով։— Պանպանակներ՝ սկզբում կա 5 թերթ, իսկ վերջում՝ 6 թերթ։— Վիճակը՝ բավարար։— Գրությունը՝ միասյուն։— Դատարկ թղթեր՝ առաջի 5 և վերջի 6 թղթերը դատարկ են, միայն թ. 2ա-ում կան երկու աղյուսակներ։— Տողերը՝ 16—17։— Գծումները՝ ճնշոմով։— Գիրը՝ նոտր գիր։— Զարդագրություն՝ չկա։— Ժամանակը՝ 1802 թ., մայիսի 24։— Գրիչը և պատվիրատուն՝ Կեսարացի մահտեսի Խաչատուր։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 6ա.— Յառաջաբանութիւն: Արդ՝ ծանիր զի սոյն համառօտիկս է զոր այս տրկար Ապտիլ Ազիզ որդին Ապտի ըՌահմանի Թէպրիզեցի հաւաքեալ է յաղագս գիտութեան աստեղաց, եւ վասն գրքիս անունն էդեալ է Բանալի աստեղաց, որպէսզի արդիւնաւորել զայս գիտութիւնս դիւրին լիցի հետեւողաց: Յաւուր շաբաթու ի սկիզբն ճէմազիլ էվէլ ամսոյն, ի թուականի եօթն հարիւր քառասուն ամի հիճրէթին (1339 թ.), եւ բոլոր այս գիրքս ի վաթսուն պրակըս է:

Թ. 6բ.— Պրակ առաջին. Յաղագս պատճառի յօրինելոյ զհամառօտ գիրքս զայս:

Թ. 7ա.— Պրակ երկրորդ, Յաղագս թարիխի (տոմար) արապի:

Պրակ երրորդ, Յաղագս թարիխի հոմայեցւոց:

Թ. 8ա.— Պրակ չորրորդ, Յաղագս թարիխի պարսից:

Թ. 9բ.— Պրակ հինգերորդ, Յաղագս նոր դարիխի զոր շարադրողքն գրքոյս հաստատեալ է:

Թ. 11ա.— Պրակ վեցերորդ, Վասն գիտելոյ զշորս տարեաց:

Թ. 12բ.— Պրակ եօթներորդ, Յաղագս յարմարելոցն աստեղաց:

Թ. 13բ.— Պրակ ութերորդ, Յաղագս գիտութեան երկնից:

(Այսպես թ. 72ա-ում հասնում է վաթսուներորդ «պրակ»ին: Թ. թ. 72բ—92ա տրվում են զանազան ծանոթություններ երկրի, արեգակի, լուսնի, աստղերի, մոլորակների մասին: Թ. թ. 92բ—96ա տրվում է բառարան — ձեռագրում գործածված արաբերեն, թյուրքերեն և պարսկերեն բառերի հայերեն-ները):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 92ա—բ.— Փառք եւ պատիւ Ամենասուրբ Երրորդութեանն, որոյ օգնականութեամբն դաղափարեցաւ պատուականագոյն գիրքս որ կոչի «Բանալի աստեղաց», ի վայելումն Կեսարացի Մահտեսի Խաչատուրին, որ իւր ձեռամբն ծրեաց իւր անցին, յամի ներմարմնութեան 1802-ին եւ ամսեանն մայիսի 24-ին։ Որք հանդիպիք, յիշեցէք ի մաղուր մաղդանս ձեր, եւ եթէ գրտանիցիք սրղալ ինչ, ներեսջիք, զի կարի ի մէջ հիվանդութեան էյի, եւ վշտալի ժամանակի, ի փառս Աստուծոյ եւ ի օգուտ ընթերց(ա)սեր եղբարց, ամէն։ Հայր մեր որ յերկինս...։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 97ա.— Պու քէթապ քիմին տերվէնիզ, Վարժապետեան Ակոբն տ(ը)ր։

1. *Շարունակված 1950 թվի մայիս—հունիս, հուլիս—օգոստոս, սեպտեմբեր—հոկտեմբեր, նոյեմբեր—դեկտեմբեր և 1951 թվի հունվար—մարտ, ապրիլ—հունիս, հուլիս—օգոստոս, սեպտեմբեր—հոկտեմբեր և նոյեմբեր—դեկտեմբեր համարներից։*

№ 83

ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթերը՝ *124։*— Գրակները՝ *10, յուրաքանչյուրը 12 թերթից։*— Մեծությունը՝ *14,3×10×1,6 սմ.։*— Նյութը՝ *դեղնած ողորկ թուղթ։*— Կազմը՝ *չունի։*— Վիճակը՝ *անբավարար, սկզբից 11 պրակ ընկել է, իսկ վերջից էլ թերի։ Անխիղճ մի ձեռք մկրատով կտրատել է բազմաթիվ թերթեր։*— Գրությունը՝ *միասյուն։*— Տողերը՝ *19—21։*— Գծումները՝ *ճնշումով։*— Գիրը՝ *բոլորգիր։*— Զարդագրություն՝ *կան քիչ թվով զարդագրեր, թոշնագրեր և լուսանցազարդեր։*— Ժամանակը՝ *15—16-րդ դար։*

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 9ա.— Ստեփան Պետրոսին, 1867, մարտի 3։

№ 84

ՊԱՐԶԱՏՈՄԱՐ

Թերթերը՝ *48։*— Գրակները՝ *անկանոն։*— Մեծությունը՝ *14,7×10,3×1,6 սմ.։*— Նյութը՝ *դեղնած հասարակ թուղթ։*— Կազմը՝ *կաշեպատ ստվարաթուղթ, ներսից կպցված է մեկական թերթ տարբեր ձեռագրից։*— Պանպանակ՝ *սկզբում կա մի թերթ տարբեր ձեռագրից։*— Վիճակը՝ *ունի քայքայված վիճակ, վերջից ընկել են բազմաթիվ թերթեր, և ներսում էլ կան պատռված թերթեր։*— Գրությունը՝ *միասյուն։*— Տողերը՝ *17։*— Գիրը՝ *բոլորգիր։*— Զարդագրություն՝ *կա մի հատ հասարակ գլխազարդ և մի հատ էլ լուսանցազարդություն (թ. 4ա)։*— Ժամանակը՝ *17-րդ դար։*

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— Կաֆա, Դէոր(գ) վարդապետ, մայիս 8։

Թ. 2ա.— Մարի(ա)մ, Աստածու սիրելուն։ Աստուած սիրող։

Թ. 3բ.— Թիվն ՌՃԼԶ (1687 թ.)։

Թիվն ՌՃԼԶ (1687 թ.), ապրիլի է (7) օրն Ե.շաբթի (հինգշաբթի) Ավետիկ, ինչել էն մօրեղ։

№ 85

ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթերը՝ *232։*— Գրակները՝ *19, յուրաքանչյուրը 12 թերթից։*— Մեծությունը՝ *12,7×8,7×3,7 սմ.։*— Նյութը՝ *դեղնած հասարակ թուղթ։*— Կազմը՝ *չունի։*— Վիճակը՝ *վատ, սկզբից և վերջից թերի, բազմաթիվ թերթեր պատառոտած են և ներքևի աջակողմյան կողմը կրծոտած, մեծապես վնասելով տեքստը։*— Գրությունը՝ *միասյուն։*— Տողերը՝ *23։*— Գիրը՝ *բոլորգիր։*— Զարդագրություն՝ *կան բավական դեղնցիկ թոշնագրեր և զարդագրեր, լուսանցազարդեր, թոշուններ, բույսեր, մարդեր, ծաղիկներ, խաչեր և գմբեթներ։ Կան նաև երկու դեղեցիկ կիսախորաններ (թ. թ. 93բ և 132ա), երկու սրբերի նկարներ (թ. թ. 147ա և 158բ), մարդու դեմքով գլխագրեր (թ. թ. 145ա և 224բ) և մարդու գլխով թոշուն։*— Ժամանակը՝ *15—16-րդ դար։*

№ 86

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Թերթերը՝ *302 (թ. թ. 142ա+142բ)։*— Գրակները՝ *25, յուրաքանչյուրը 12 թերթից։*— Մեծությունը՝ *12,7×8,8×3,7 սմ.։*— Նյութը՝ *դեղնած հասարակ թուղթ։*— Կազմը՝ *կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով մի քանի զարդարանքներ կան։*— Պանպանակներ՝ *սկզբում և վերջում կան երկուական թերթ հասարակ սպիտակ թուղթ։*— Վիճակը՝ *լավ (միայն թ. 292-ը ընկած լինելով բնագրից, հետագայում կրկին գրելով, պակասը լրացվել է)։*— Գրությունը՝ *միասյուն։*— Դատարկ թղթեր՝ *թ. թ. 3բ, 8ա, 8բ, 9ա և 4 թերթ պահպանակներում։*— Տողերը՝ *17։*— Գծումները՝ *ճնշումով։*— Գիրը՝ *բոլորգիր։*— Զարդագրություն՝ *կան շատ դեղեցիկ թոշնագրեր և ծաղկագրեր, զարդագրեր և գլխազարդեր, կիսախորաններ և լուսանցազարդեր։ Թ. 176բ-ի լուսանցքում ունի մի սրբապատկեր և 4 հատ էլ խորաններ՝ տերունական նկարներով (թ. թ. 1բ, 2ա, 2բ, 8ա)։ Թ. 9բ-ում ունի մի գեղեցիկ խորան, որը ներկայացնում է մի անձնավորություն, գլխին ունենալով թագավորական թագ, իսկ ձեռքին մի մանդոլին։ Ենթադրվում է, որ սա կամ հայկական թագավորի նկարն է, և կամ նույնինքն նկարչի նկարը, որի ներքևում մեծատառերով գրված է. «Յիշեա զԴաւիթ նկարողս»։*— Գրիչը՝ *Գրիգոր երեց Բաղիշեցի։*— Պատվիրատուն՝ *Տեր Թումա։*— Մաղկողը՝ *Դավիթ։*— Ժամանակը՝ *1642 թ.։*— Վայրը՝ *Բաղեշի շրջանում։*

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1բ.— Ով մայր իմ սուրբ, վասն աղաչանացդ քոց, թողեալ լիցին մեղք Տէր Թումին եւ մի յիշեսցի մեղքն առաջին։

Թ. 2ա.— Ով միածին Որդի, արարիչ երկնի եւ երկրի, թող զմեղս զՏէր Թումայի հ(օ)րն վասն աղաչանաց խոց։

Թ. 3ա.— Ով խաչեալդ Աստուած, յիշեա զՏէր Թումին ընդ աջակողմեան աւազակին, յորժամ գաս արքայութեամբդ քով, նաև (կապգիր, որը վերծանվում է «Թումա») տրուպս։

(Վերոհիշյալ երեք հիշատակարաններում Տեր Թումի տեղ նախապես եղել է մի ուրիշ անուն, շատ հավանաբար ձեռագրի գրչի՝ Տեր Գրիգորի անունը, որը հետագայում ջնջվել է և նույն տեղում գրվել է Տեր Թումի անունը)։

Թ. 9բ.— Յիշեա զԴաւիթ Նկարողս։

Թ. 296բ.— Փառք... որ եւս կարողութիւն տկար ոգւոյ եւ անիմաստ Գրիգոր երիցու հասանել ի յաւարտ սաղմոսիս հոգիախառն եւ աստուածաշունչ մարգարէին Դաւթեայ։ ...(Գրչի հիշատակարանը կրոնական բովանդակությամբ շարունակվում է մինչև թ. 297բ-ի վերջը։ Թ. 298ա-ով շարունակվում

է հիշատակարանը, սակայն տարբեր ձեռագրով և թանաքով)։

Թ. 298ա.— ...միտք զորպիսութիւն սաղմոսին, եւ այլ միայն փչօղն շնորհաց Սուրբ Հոգին, որ խաղաց ի հոգերգող մարգարէն Դաւիթ։ Արդ՝ ես մեղանչականս եւ պարտաւոր Տէր Գրիգոր, ի երկրէն Բաղիշու, ի խնդրոյ մուղդըսի Աշարաթին, ի վայելումն Տէր Թումին, ի թվականութեանս հայոց տումարի ՌՂԱ (1642 թ.), գրեցաւ սաղմոսարանս ընդ հովանեաւ Սրբոյն Սարգսի եւ այլ սրբոցն որ աստ կան հաւաքեալ։ Յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք մեղապարտ գծողիս, ամէն։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— Այս է յիշատակ Մուղսի Կաղաթին, ուր կողակից Անմնին, ուր որդի Տէր Ակոբին, կողակից Աղութին, յուր որդի Կաղաթին, դեստեր Քօրօղին, ուր համա(յ)ն ննջեցեալեաւ։ Դարձ(եալ) յիշեցէք ի լուսահոգի մահտեսի Կաղաթին, ուր որդի Տէր Ակոբին, որ այս սաղմոս ուր հալալ վաստակոց առեց, եդ ի դուռ Կուռուպաշայ Սուրբ ըՍտեփանոս(ին) անջինջ յիշատակ։

Թ. 143ա.— Ե(ւ) ես Տէր Յակոբ որդի Մուղ(դ)սի Աշա(րա)տին, պատչ(ա)ռ գրում այս է, որ Օսման աղէն ի երկրէն Առտօսցուց, Նկավ ի գուղ Կուռուպաշ, որ անդ կէր անբսր... (սուրբ) ըՍտեփանոս, առեալ տարաւ խաչբ... եւ Աւետարան եկեղեցու ըդդես(տ)ք տարաւ գերի ի երկիր ուր, ի թվականիս մերում ՌՄԿԷ (1818 թ.)։

Թ. 300ա.— Սահակ մէկ թանապաթ առեց։

Թ. 301ա.— Ի Հ(այոց) թվին ՌՄԿԹ (1820 թ.)։

Եւ ապիրատս, եւ անարժանի տիրացու (կ)ամարար, կամակաց, կամակ, կամաց, կամ(ա)ր, (կ)ամաս, կամաւ, կամուդ, կամթակ, ապիրատ եւ տրուպ Մանուկ։

№ 87

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Թերթերը՝ 299։— Պրակները՝ սկզբում 12-ական թերթից են եղել, սակայն այժմ գոյություն չունեն, բոլոր թերթերը իրարից բաժանված են։— Մեծությունը՝ 40×26×9 սմ.։— Նյութը՝ դեղնած հաստ թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ թուղթ։— Պահպանակներ՝ սկզբում և վերջում մեկական թերթ թուղթ։— Վիճակը՝ սկզբից և միջից բավականին թերթեր ընկել են։ Ձեռագիրը քայքայված է, թերթերը միմյանցից պոկվել են, իսկ բոլոր թերթերը անխտիր ցեցակեր են։— Գրությունը՝ երկսյուն։— Տողերը՝ 37։— Գիրը՝ բոլորգիր։— Գծումները՝ ճնշումով։— Զարդագրությունը՝ կան բավականին գեղեցիկ թռչնագրեր և ձկնագրեր, զարդագրեր և գլխազարդեր, թռչուններ և գազաններ, լուսանցազարդեր և սրբերի նկարներ։ Առանձնապես գեղեցիկ են թ. 84բ-ի մեծ նկարը և թ. 85ա-ի կիսախորանը, ինչպես նաև մի քանի գլխազարդերը։ Գործածված են ոսկեգույնը, որդան կարմիրը և մի շարք ուրիշ գեղեցիկ գույներ։— Գրիչները՝ Հովհաննես և Խաչատուր քահանաներ։— Պատվիրատուն՝ մահտեսի Տիրատուր։— Ժամանակը՝ 1593 թ.։— Վայրը՝ Խիզան։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 83ա—բ.— Ողորմեա Տէր Աստուած ստացողի գրոցս մահդասի Տիրատուրին, եւ ծնօղացն Մարտիրոսին, եւ Ղադամ խաթունին, եւ կողակցացն, եւ որդոցն, եւ եղբարցն. եւ ամենայն ազգականացն, եւ ինձ մեղսասէր Յով(հ)ան(ն)էս չքահանայ գրագրիս, եւ ծնօղաց իմոց մահդասի Տէր Միքայէլին, եւ Փաշաջանին, եւ կողակցին իմոյ խաթունաղին, որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս, եւ եթող ինձ վէր(ք) անբըժշկելի, եւ որդոյն իմոյ Խաչատուրին, եւ դստերն իմոյ Եփրոսինին, որ նոքա եւս յայսմ ամի փոխեցան, եւ հանգուցեալ եղբօրն իմոյ Ամիրսէթին, եւ քուերն իմոյ Նուրանփաշին, եւ Բ (2) սուրբ քահանայիցն եւ ընկերակցացն իմոյ, որ աշխատեցան ի տառիս գրեալն՝ Տէր Գրիգորիս վարպետին եւ մահդասի Տէր Խաչատուրին, եւ որ ասէ զԱստուած ողորմին, Աստուած իւրն ողորմեսցի, ամէն։

Ո՜վ վարդապետք աստուածաբան
Եւ հայրապետք ընդրողական,
Սուրբ քահանայքըդ պատուական,
Եւ սարկաւագքդ ուսումնական,
Տերք եւ տղայքըդ միաբան
Եւ ժողովուրդք ամենեքեան,
Որ ի սուրբ տեղս էք ժողովման,
Տառիս առնէք ունկնդրական,
'Ի առնուք ի միտ ըստ պատշաճման
'Ի աւրհնաբանէք զԱստուածըն բան,
Զի մարտիրոսք չարչարեցան
Եւ աղօթողքն արդարացան.
Զձեզ աղաչեմ զամենեսեան՝
Արժան առնէք դուք զիս յիշման։
Զվարդապետն իմ սուրբ եւ պատուական,
Զտէրտէրն իմ քաջ եւ սրբազան,
Զտէր Մարտիրոսն արիական։
Է գեղեցիկ եւ զանազան,
Ես չեմ արժան ըզքեզ գովման.
Եմ մեղաւոր եւ ստաբան,
Դու լուսատու, լուսաբերան,
Լուսաւորես զազգըս մարդկան։
Իս չեմ կարող ըզքեզ յիշման,

Զի պարտաւոր եմ ու պարտական։
Դու վարդ փթթել քաղաքն Հիզան,
Հոտրդ բուրեաց ի Հայաստան։
Դու վարդապետ վարդաբերան
Եւ քահանայ աստուածածան։
Դու ինձ վարպետ 'ւ ես՝ քո ծառայն։
Դու իմ ծընօղ հայր գրթական,
Եւ ես որդի խոտորական։
Դու դարձուցիչ մեղաց մարդկան,
Ըզմեղաւորս արաՀ արժան,
Զօտանաւորս առնեմ լըման,
Որ չեմ կարել ասել այլ բան։
Մահն զիս արար ի խոր խոցման,
Փորս եւ ջիգարս եղեւ այրման։
Տուր զհայր մեղայն, որ ի վերայն,
Առնուք զվարձն յարքայութեան, ամէն։

Թ. թ. 297ա—299բ.— Փառք համագոյ, համատիւռ, համազօր, համապատիւ Երրորդութեանն...։

...Արդ՝ զայս լուեալ հաւատարիմ եւ իմաստուն, եւ հոգեւոր, աստուածասէր եւ աղքատասէր մահդասի պարոն Տիրատուրն, եւ փափաքէր այսմ լուսազարդ տառիս, եւ վարդապետիթ եւ անուշահոտ բուրաստանիս, զոր պայծառ ջահքն եւ անաղօտ լապտերքն եկեղեցոյ Տէր Գրիգորիս Վկայասէրն, եւ Տէր Ներսէս Շատաշնորհն, եւ Կիրակոս անուն ոմն բանիբուն վարդապետ, հոգ տարան եւ յամենայն ազգաց ժողովեցին զպատմութիւն նահատակութեան սրբոց։

Արդ՝ այսպիսում լուսազարդ տառիս ցանկացօղ եղեւ մեծաւ փափաքմամբ աստուածասէր տանուտէրն մահդասի Տիրատուրն։ Եւ մեք տեսաք զփափագ եւ զսէր նորա, զոր ունէր առ հոգեւորսն։ ... Եւ գրել զսուրբ գիրքս յիշատակ բարի հոգոյ իւրոյ եւ ծնօղացն՝ հօրն Մարտիրոսին, եւ մօրն Ղադամխաթունին, եւ եղբարցն Շարբանին, Մարգարին, Փիրնազարին եւ Մխիթարին, եւ կողակցին իւրոյ Շուշանին՝ հանգուցելոյն ի Քրիստոս, եւ միւսոյն Արզուշանին, եւ որդոցն Մա(տ)թէոսին, Մարտիրոսին, եւ Հով(հ)ան(ն)էսին, եւ ամենայն արեան մերձաւորացն նորա, կենդանեացն եւ հանգուցելոցն, ամէն...

Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց, անարժանս ի մանկունս եկեղեցոյ, թափառնիկս եւ ունայնս ի գործոց բարեաց, Խաչատուր սուտանուն քահանայս, որ անուամբս միայն եմ եւ գործովս ոչ, այլ հեռացեալ եմ ի բարի գործոց, զչարս առնելով եւ զբարին խափանելով, տկարացեալ հոգով, եւ անկարացեալ մարմնով, քանզի բեռինք մեղաց իմոց անթուելի են..., անթիւ բազմութեամբ իբրեւ զաւազ ծովու, զոր յուսամք եւ հայցեմք յամէնաառատ քաղցրութենէն Աստուծոյ, որ ոչ առնէ մեզ անտես, այլ վերստին կանգնէ զմեզ եւ զձեզ բազում ողորմութեամբն իւրով, ամէն։

Շնորհիւ Տեառն սկսաք ես անար(ժան)... Բ (2) ընկերքս իմ՝ Տէր Գրի(գոր) (վ)արպետն, եւ Տէր Յով(հ)ան(ն)էս (քահանայ)ն, եւ ողորմութեամբ նորին (աւարտեց)աք զսուրբ գիրքս եւ զաստուածա... ի քաղաքիս որ կոչի... [Խիզան], ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի եւ Սուրբ Յո)վ(հ)աննէս Մկրտչին եւ (Գէորգայ զօ)րավարին... Ի մեծ թուակ(նիս Հայոց) Ռ եւ ի ԽԲ (1593 թ.), ի հայ(բապետութեան) Տեառն Էջմիածնին (Դաւիթ կաթողիկոսին) Ամենայն Հայոց, եւ ի (կաթողիկոս)ութեանն մերոյս Աղթա(մարայ Սրբազ)ան հայրապետին (Գրիգոր)իսի, ի բռնակալութեանն... սուլթան Մուրատ(ին)... եւ պարսից թագաւորին Շահաբասին, եւ ի մերոյս պարոնութեան Միրհասանին, ի դառն եւ ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք եւ հալածիմք ի յանօրինաց վասն ծովացեալ մեղաց մերոց, զոր Տէր Աստուած անփորձ պահեսցէ յամենայն չարեաց զԽիզան քաղաքի քահանայքն եւ զժողովուրդն, եւ զամենայն հաւատացեալսն ի Քրիստոս, ամէն։

Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, զմանկունսդ սուրբ եկեղեցոյ, զի որք հանդիպիք տեսութեան սուրբ գրոցս, վարդալով կամ օրինակելով, եւ կամ հարեւանցի տեսանելով, զաւելորդն բառնայք եւ զպակասութիւնն լնուք եւ խոշորութեան եւ սխալանացս անմեղադիր լինել, զի կար մեր այս էր։ Վասն որոյ երես ի գետին դնելով աղաչեմ զամենեսեան, զի լի սրտիւ եւ սուրբ հաւատով Աստուած ողորմի ասացէք Տէր Գրիգորիս քահանային եւ ծնօղացն՝ հօրն քաջ եւ արի Տէր Մարտիրոս վարպետին, եւ մօրն Աղաբէկուն, եւ հօրեղբօրն Տէր Սարգիս վարպետին, եւ պապուն Սարգիս փ(ի)լիսոփային, եւ մեծ մօրն Խանումին, եւ եղբարցն Իգնատիոսին, եւ Յով(հ) ան(ն)էսին, եւ քրւերցն Աննային, եւ Եղիսաբեթին, եւ ամենայն ազգականացն իւրոց ամէն։ Եւ առաւել Աստուած ողորմի ասացէք Տէր Յով(հ)ան(ն)էսին, եւ ծնօղացն Միքայէլ քահանային, եւ Փաշաջանին, եւ եղբաւրն Ամիրսէթին, եւ քրւերն Նուրանին, եւ ամենայն ազգաց նոցին, ամէն։ Եւ զիս զզառածեալս մեղօք յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր եւ Աստուած ողորմի ասացէք Խաչատուր չքահանայիս եւ ծնօղաց իմոց մահդասի Մուրատին եւ Հռիփսիմին, հանգուցելոյն ի Ք(րիստոս), եւ միւս մօրն իմոյ Ղազարբէկուն եւ եղբարցն իմոց Պարսամին եւ Աբրահամէլքին, Թոմաջանին եւ Ամիրխանին, եւ քրւերցն իմոց Ահլիփաշին, Խաթունաղին եւ Համասիին, եւ կենակցին իմոյ

(անունը բաց է թողնված), եւ ամենայն աղգականաց իմոց, կենդանեացն եւ հանգուցելոցն մերոց, յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք, եւ Աստուած, որ առատն է (բնագրում— ատատն է), ի տուրս բարեաց, ձեզ եւ մեզ ողորմի յետ միւսանգամ գալուստն, ամէն։

Դարձեալ կրկին անգամ աղաչեմ յիշել ի Տէր զստացող սորայ զմահդասի Տիրատուրն, որ եւս գրել զսուրբ գիրքս եւ ծաղկով զարդարել, յիշատակ բարի իւրն, եւ իւր ծնօղացն եւ ամենայն արեան մերձաւորացն զոր տէր Աստուած զինքն եւ զիւր որդիքն անփորձ եւ անսասան պահեսցէ, մինչեւ ի խորին ծերութիւնն ամէն։ Եւս առաւել յիշեցէք ի Քրիստոս զմեղաւոր քահանայս սուտանուն անուամբ Խաչատուրս, եւ զմեծ պապն իմ զմահդասի Սարգիս Տէր վարպետն, եւ զորդիքն իւր զբանիբունն, եւ զքաջ հեռեստորն զՏէր Մարտիրոս վարպետն, եւ զՏէր Սարգիս վարպետն, եւ զՏէր Գրիգորիս վարպետն, եւ զամենայն ազգատոհմն մեր, լի սրտիւ եւ բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք եւ մեղաց թողութիւն հայցեցէք, եւ Աստուած ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս ողորմեսցի, ամէն։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 83բ.— Յիշեցէք զստացողն սուրբ տառիս զմահտասի Տիրատուրն եւ զդուստրն Բէկոմն, Մէրատիկն, Ոսկիտատիկն։ Յիշեցէք ի բարին Մարտիրոսն եւ որդին Գրիգորն, ըՍտէփանոսն։ Խոժոր գրիս թվական հազար եւութանասուն չորս (1625 թ.)։

Թ. 84բ.— Եւս Գրիգորի որդի Յո(վ)հաննէս ժամարարս ընծայեցայ Քրիստոսի, թիւն փոռ ՌՃՂԸ (1743 թ.) շաբաթ Թ-ումն (9-ին) ձեռամբն Աստուածատուր վարդ(ապետին) օրն կիրակի, տօն Սուրբ Երրորդութեան, որ է փոխ գալէստ(ե)անին։

Թ. 181ա.— Վերջին ըստացողն Ազիզ Բաշխին եւ կողակցին Բէգոմին եւ որդոցն Հով(հ)ան(ն)էսին, Եդգարին, եւ կողակցին Մարիամին եւ դրստերացն Ուղուսիէ Վարթերին, եւ որդումն Հէրապետին եւ իւր կողակցացն։

Թ. 198ա.— Զվերջին ըստացող գրոցս Եդգարն եւ կողակիցն Մարիամն, եւ դուստրն Ուղուսին, եւ որդին Հէրապետն, եւ կողակիցն հանգուցեալ ի Քրիստոս Սարալուն, եւ միւս կողակիցն Թանխաթունն, եւ որդին Բէկոմն, (եւ) կ(ա)րդ(ացողաց), ամէն։

Թ. 201բ.— Զվերջին ըստացող սուրբ գրոյս զպարոն Հէրապետն, եւ կող(ակ)իցն Թանխաթունն, եւ միւս կողակիցն հանգուցեալ ի Քրիստոս Սարալուն։

Թ. 212բ.— Զվերջին ըստացող գրոյս պարոն Հէրապետն, եւ զմայրն Եդգարն, եւ զմայրն Մարիամն, եւ դուստրն Ուղուսին։

Թ. 298բ.— Այլ եւ յիշեցէք... զխաւջայ (Մարտիրոսն), որ զայսմաւուրքս ի Բաղէշ քաղաքն մինչեւ ի Ջուղայ աշխատեցաւ ի տանելն, բարեխաւսութեամբ ամենայն սրբոց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զինքն անփորձ պահեսցէ, եւ վարձս բարիս ի յԱստուծոյ առցէ, ամէն։

№ 88

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Թերթերը՝ 332։— Պրակները՝ 28, յուրաքանչյուրը 12 թերթից։— Մեծությունը՝ 35×23,5×8 սմ.։— Նյութը՝ դեղնած հաստ թուղթ։— Կազմը՝ կաշեպատ ստվարաթուղթ։— Պանպանակները՝ սկզբում եւ վերջում երկուական թերթ հասարակ թուղթ։— Վիճակը՝ սկզբից 21 պրակ թերթ։ Այժմ քայքայված, թղթերը իրարից բաժանված, բազմաթիվ էջեր վառված, սեւացած և ցեցակեր։— Գրությունը՝ երկսյուն։— Տողերը՝ 39։— Գծումները՝ ճնշոմով։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդազարդությունը՝ կան հասարակ զարդագրեր եւ թռչնագրեր, ձկնագրեր, գլխազարդեր եւ լուսանցազարդեր։ Կա մի հատ կիսախորան թ. 1ա-ում։— Գրիչը՝ Ստեփանոս քահանա, իսկ տեղ-տեղ էլ հիշվում է որպես գրիչ Մարտիրոս քահանան (թ. թ. 32բ, 100բ, 175բ)։— Պատվիրատուն՝ Եղիսաբեթ։— Ժամանակը՝ 1685 թ.։— Վայրը՝ Շոշ (Սպահան)։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 326ա—բ.— Փառք անբաժանելի...։ (Վ)ասն որոյ ըղձալի փափագմամբ եւ ջերմեռանդ սիրով ըստացաւ զսուրբ յայսմաւուրքս զայս մեծահաւատ, առաքինի, աստուածասէր եւ ողորմած, մեծազգի եւ գովելի, մեծատուն կինն Եղիսաբեթ, որ ստացաւ զսա հալալ ընչից իւրոց եւ ստացուածոց, յիշատակ իւրն եւ կենակցոյն, եւ որդոցն, եւ ծնօղացն եւ ամենայն արեան մերձաւորացն։ (Դ)արձեալ յիշեսջիք ի Քրիստոս Եղիսաբեթն եւ կենակիցն իւր Զիք Աւետիքն, եւ որդիքն Աղամալն, Պօղոսն եւ Պետրոսն, եւ դստերքն Նանաջանն ու Մէրջանն, որ հանգուցեալ են առ Քրիստոս։ (Դ)արձեալ յիշեցէք ի Քրիստոս Զիք Աւետիքն, եւ ծնօղքն իւր զԶիք Պետրոսն եւ Մէրատիկն, եւ եղբայրն Վասիլն, եւ քոյրն Ոսկետատիկն, եւ պապն Եարվալի, եւ հանիկն Սօլթախաթունն։ (Դ)արձեալ յիշեսջիք ի Քրիստոս Եղիսաբեթն եւ զհայրն իւր Միրզամն եւ զմայրն Խանզատէն, եւ եղբայրն Գրիգորն, եւ քոյրն Սանդուխտն, եւ պապն Աղազարն, եւ հա...ն Հռիփսիմէն, եւ որդիք Աղազարին՝ Հայրապետն եւ Շուշան, եւ եղբօր որդի Եղիսաբեթին Աղազարն, զոր Տէր Աստուած խաղա(ղա)կան կենօք պահեսցէ, ամէն։

(Դ)արձեալ յիշեցէք ի Քրիստոս Աղամալն, եւ կողակիցն իւր Սանդուխտն, եւ որդին Միքայէլն։ (Դ)արձեալ յիշեցէք ի Քրիստոս

զՊօղոսն, եւ կողակիցն իւր Մարիամն, որ Աստուած ողիրմի ասէք: (Դ)արձեալ յիշեցէք ի Քրիստոս զՊետրոսն, որ մանկտի տիօք հանգեաւ ի Քրիստոս:

(Կ)րկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զՁիք Աւետիքն եւ կողակիցն Եղիսաբեթն, եւ դըստերքն Նանաջանն եւ Մէրջան(ն): (Դ)արձեալ յիշեսջիք ի Քրիստոս զՆանաջանն, եւ որդին իւր զծառայ Փանոսն, եւ դստերքն իւր զՎարդերն (5 սմ. բաց է թողնված այստեղ) զոր Տէր Աստուած խաղաղական կենօք պահեսցէ մինչեւ ի խորին ծերութիւն. ամէն:

(Դ)արձեալ յիշեցէք ի Քրիստոս զՁիք Աւետիքին ծառայն զՅովսէփն, եւ զկողակիցն զԽոռիկն եւ որդիքն Մկրտումն եւ զՅարութիւնն (երկու եւ կես տող բաց է թողնված):

(Ա)րդ՝ գրեցաւ սուրբ յայսմաւուրքս ի քաղաքս Շօշ, որ կոչի Սպահան, ի թուականիս Հայոց ՌՃԼ եւ չորս (1685 թ.), ի թագաւորութեան Շահ Ս(ու)լէ(յ)մանին, եւ ի հայրապետութեան Տեառն Եղիազ(ար)ու. եւ ի յառաջնորդութեան մայրաքաղաքիս Ջուղայու քաջ րաբունապետի Տէր Ստեփանոսի արքեպիսկոպոսի, ի դըրունս Սուրբ Հոգի եկեղեցւոյ, ձեռամբ անարժան եւ անիմաստ, փծուն եւ սխալամիտ, եւ ամենայն մեղօք լի Ստեփաննոս իրիցի:

(Ձեռագրի այս գլխավոր հիշատակարանից բացի, բազմաթիվ գլուխների վերջավորության կան փոքր հիշատակարաններ, որտեղ Ձիք Ավետիքը հիշված է որպես պատվիրատու):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 327ա-բ.— Փառք համագոյ եւ համապատիւ...:

Յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զստացող սուրբին զծերունազարդ եւ զհանճարունակ մուշախբիւբեցի մահտասի Տէր Յո(վ)հաննէս բարեմիտ եւ սրբակրօն քահանայն, որ է յոյժ գիտութեանց սիրող եւ սուրբ գրոց հետեւօղ. նա եւ զբարեպաշտ ամուսինն իւր զՄարգրիտանն, եւ զանդրանիկ որդին իւր զՍտեփաննոսն, եւ զհանգուցեալ դուստրն զՄարիամ տատիկն եւ զայլ ամենայն արեան մերձաւորսն: Որ եւ ժտելով աղաչեմք եւ սիրով հայցեմք յաստուածասիրացդ, յիշեսջիք ի յերկնագնաց յաղօթս ձեր զստացող սուրբ յայսմաւուրիս զմ(ու)շախբ(իւ)ր(ե)ցի մահտասի Տէր Յովհաննէսն, եւ զհայրն իւր ի Քրիստոս հանգուցեալ լուսահոգի Բարսեղեան, եւ զմայրն իւր առ Աստուած փոխեցեալ զՎարթերն, եւ զեղբարքն իւր առ Տէր հանգուցեալ զմահտասի Տէր Բաղդասարն, զՏէր Մկրտիչն, զՆրեմիայն եւ զՊետրոսն, եւ զքորքն իւր զհանգուցեալքն առ Քրիստոս զՍափուսն, զԴօլվաթն եւ զՏատիկն: Դարձեալ յիշեսջիք զմահտասի Տէր Յո(վ)հաննէս ջատագով քահանայն, եւ զպապն իւր ի Քրիստոս հանգուցեալ մահտասի Տէր Պարսամն, եւ զորդիք նորին զՅո(վ)հաննէս վարդապետն, զՏէր Ոսկանն եւ զմահտասի Յովասափն եւ զայլ ամենայն արեան մերձաւորսն նոցին:

Դարձեալ յիշեսջիք զվերոյ ստացող սուրբ գրոյս զՏէր Յո(վ)հաննէս քահանայն, եւ զեղբօր որդիքն իւր զՄատթէոսն, զԲարսեղեան, զՅարութիւնն, զՎարդանն եւ զԳրիգորն, եւ զդստերսն Ազաթլուն, զԲէկումն, զԴօվլաթ խանումն: Դարձեալ յիշեսջիք զՏէր Յո(վ)հաննիսի եղբօր ամուսինքն, զԳուլնարաթն, զԹագուհինն, զԽաթունն եւ զՄանիէն: Այլ եւ յիշեսջիք զվերոյ մահտասի Տէր Յո(վ)հաննէսն, եւ զկողակիցն իւր զՄարգրիտանս, եւ զՄարգրիտանին ծնողքն ի Տէր հանգուցեալ զՅարութիւնն եւ զԹանկխաթունն, եւ զհանգուցեալ եղբայրն իւր զՄարգիսն, եւ զքոյրն զՀռիփսիմէն, եւ այլ ամենայն արեան մերձաւորսն նոցին:

Նաեւ յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՏէր Յո(վ)հաննէսս, որ Խատացայ զսուրբ վկայարանս ի Բասրայ քաղաքոջս եւ յղեցի զսա ի Հնդիկս, ի Բանդար Սուրաթն, յիշատակ ինձ եւ ծնողացն իմոց եւ ամենայն մերձաւորացն մերոց: Եւ մաղթելով ժտիմ ի ձէնջ, ո՜վ հարք իմ եւ եղբարք, յիշեսջիք զՍուրաթու եղեալ քահանայքն, զՍուրբ Յո(վ)հաննիսի եկեղեցւոյ՝ ծերունազարդ Տէր Յո(վ)հաննէսն, եւ զՅերեւանա(յ) Ամենափրկչի եկեղեցւոյ Տէր Յո(վ)հաննէսն, եւ Շավալենց եկեղեցւոյ Տէր Գրիգորն եւ զՏէր Ոսկանն, եւ զերեսփոխանն հեալղարենց ի Տէր հանգուցեալ Սարհադի որդի զԽաչիկ աղայն:

Դարձեալ աղաչեմք ի սրբազնագործ դասուց քահանայիցդ, զի յամենայն ժամ խնամ տանելով ի վերայ սուրբ գրոյս, միշտ ընթեռնուցուք զսուրբ գիրքս ի լուր ամենայն ժողովրդոց: Եթէ ի գիշերային ժամոյն վասն շողութեան եւ կամ ի տարաժամ լինելոյն ոչ կարդայք զսուրբ վկայարանս, սակայն յերեկոյեան ժամին յամենայն աւուր անխափանօրէն եւ անձանձիր հանապազօր ընթեռնուք ի լսելիս մանկանց եկեղեցւոյ, եւ դուք ընթերցողքդ եւ հետեւողքդ վարուց սրբոցն, եւ զպատմողքդ զնահատակութիւն սրբոց արեամ(բ) նահատակեալ մարտիրոսացն, ի Քրիստոսէ յուսոյն մերմէ ըստ միոյն բիւրապատիկ վարձատրեսջիք: Ըստ այնմ որ ասեն ի յերգս սրբոց վարդապետացն թէ տօնաւէրքն չեն զրկած ի պսակաց մարտիրոսաց, առանց գանից եւ տանջանաց, հաղորդ լիցին նոցին փառաց: Քանզի երանելի սուրբ նահատակքն վասն սիրոյ անթառամելի պսակացն փառաց, յօժար կամօքն իւրեանց զմարմինս ի տանջանս անտանելիս եւ յա(յ)րումն հրոյ մատնէին, որով ընտիր գտանէին առաջի Աստուծոյ: Ուրեմն ո՞րչափ առաւել պատկանէ մեզ, զի ընթեռնլով հետեւիլ շաւղաց եւ պատմութեանց նոցին. զի նոցին անհուն վարձուցն արժանի գտցուք՝ թարց տանջանաց եւ նեղութեանց:

Արդ՝ եղեւ ստացումն սուրբ գրոյս ի հայրապե-

տութեան Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Տեառն Յակոբ գերամեծար սրբափայլ կաթողիկոսին, եւ մերոյս Ջուղայոյ եւ Բասրայու եւ Հնդկաց առաջնորդութեանն գերիմաստ եւ խոհեմազարդ գիտնական Տէր Դէորգ աստուածաբանութեան քաջ բաբունապետին, զոր այժմ բազմախումբ ժողովուրդք հանդերձ զետեղեալ կամք ի Բասրայ վասն բերման ժամանակիս, ցրեալ եւ կողոպտեալ ազգս մեր, զրկեալ ի տանց եւ ի բնակութեանց, ի հայրենեաց եւ վայելչագեղ սրբոց եկեղեցեայց։ Վասն քարասրտից բռնաւորացն պարսից, փախուցեալք ի նահանգոջս Բասրու եմք բնակեալ, զոր եւ այժմ իշխանութիւն ալրութեան քաղաքիս, եւ բոլորոյն Բաբելոնի, Ս(ուլ)ղ(յ)ման փաշային, զոր Տէր Աստուած զնա ընդ յերկայն աւուրս արասցէ, վասն զի բազում խնամ ունի ի վերայ ցրուեալ ազգիս մերոյ, որոյ թշնամին ընդ ոտիւք եղեցի։ Եղեւ այս ի թուին Փրկչին մերոյ ՌԷՃԿԲ (1762 թ.), իսկ Հայոց ՌԲՃԺԱ (1762 թ.) եւ Ազարիայի ԱՃԽԶ (1762 թ.), յամսեանն յունուարի ԺԵ-ումն (15-ին), վերջ։ Հուսկ եւ յետ քան զամենեսին զվանեցի Սարգիս անարդիւն իբր քահանայս յիշել աղաչեմ, զոր ձեռամբ իմով զվերջին յիշատակարան սորին գրեցի, եւ յիշողդ առաջի Աստուծոյ յիշեալ լիջիք, որում փառք յաւիտեանս, ամէն։ Հայր մեր որ յերկինս...։

Թ. 327բ.— Արդ՝ եղեւ ըստացումն սուրբ այսմաւուրիս յերկրորդ մարդոյ, բայց կարդացողք ոչ պտտին մոռանալ զերկոսին զերախտին. վերջ։

Ավ— Ի 8 նոյեմբ(ե)ր 1835 մտալ ի քաղաքս այս, որ է Սուրաթ։ Ա(ստուծոյ) խ(ոնարհ) ծառայ Տէր Կարապետ Վարդանեան։ Եւ ի 1 յունուարի 1836 մտալ վիճակ ողորմութեամբ Տեառն։

Թ. 328բ.— Ես Ամիրա... Գրիգորի, որդի Հովանջանու, գրեցի, ով որ կարդայ, մին բերան «Հա(յ)ր մեր» ասի, ուր մեղացն թողութիւն ենի։ Գրեցի թիւն ՌՃԼԸ-ումն (1689 թ.) Դամայ ամսին ԺԸ-ումն (18-ին), ի գուղն Ջուղայ, դպաւորութիւն Շայ Օլչմանին, առաջնորդութիւն Եսա(յ)ի Փանոս վարդապետին, կաթող(ի)կոսութիւն Եղիազար վարդապետին։ Քալանթարութիւնին Պարաբենց Խաչիկի որդի Աւետին։ Գրվեցաւ Դամայ ամսին ԺԸ-ումն (18-ին), օրն շորեքշաբաթ։

Ես գուղհարցի Տէր Կարապետ ծառայ եմ Աստուծոյ, ամէն։ Օվ որ կարդայ, մին բերան ողորմի տայ Աստուծուն, ողորմի, ամէն։ Գրեցի թիվն փոքր ԱՃՄԷ (1773 թ.), Նախայ բանումն, վերջ։

(Թ. թ. 329ա—332բ.— Կա այբբենական մի ցանկ յայսմաւուրքի մէջ հիշված սրբերի, հետևյալ հիշատակագրությամբ).

Թ. 332բ.— Գրիգոր Մերենցն է, որ զայսմաւուրս արարեալ է։

Ըստ հրամանի սրբակրօն հօր մերում Տէր Զաքարիա Տէր Պետրոսեան Պողեանց Մէլքումեան նոր ջուղայեցոյ յօրինակեցաք զայսմաւուրիս ցանկին ըստ...կ(ա)ռեաց մերոց։ Եւ այժմ եւ յապայն խընդրեմ աղերսիւ ի սուրբ հարցդ վայելողաց հանդիպողաց յիշել զն(ո)ւաստութիւնս մեր ի սուրբ յաղօթսդ ձեր, զի թերեւս եւ մեք արժանի լիցուք համայնիւք մերով քաւութեան այժմ եւ ի յաւուրն ճեռնում։ Եղեւ ի Սուրաթ Բանդարոջս յամի Տեառն 1801 եւ ի փորրն (թուի) Ազարիայի 186, ի սեպտեմբերի մուտն, եւ ի Նադար ամսոյ ԺԵ-երորդին (15-ին) յաւարտ։ Յամենիցդ տրուպ եւ յետնորդ ծառայ Նիկողայոս Տէր Զաքարիայն Պողեանց նոր ջուղայեցոյ։ Եւ յետ ամենեցուն յարժանաւոր անձանց յիշեցէք, յիշել մաղթեմ եւ ինձ ստրուկ եւ տառապեալ ծառայիս անպիտանի։ Զի սուրբ գիրքս այս ի մի փերթ էր կամուած, որ ըստ մեծութեանն եւ զթանձրութեանն զկազմն իւր բեկբեկեալեալ էր, գրեթէ բոլորովին մաշեալ եւ փտեալ, եւ զմուտսն սփռեալ եւ տարածեալ ի թուղթսն բոլոր, նաեւ զխորագրաց զկարմիր գրերսն աւերեալ, որ բնաւ չերեւէր ինչ, զոր եւ ի նայել եւ ի տեսանել հիրոյս՝ ցաւէի եւ աւաղէի զոր հանապազ, բազմիցս անգամ խորհէի ձեռնամուխ լինել եւ կազմեցն ծանր թուէր ինձ յոյժ, յոր սակս պակասութեան զօրութենիս։ Այլ այժմ յառաջնորդութեամբ ամենազօրի Սուրբ Հոգւոյն Աստուծոյ, սրտապնդեալ ձեռն արկաք, նախ յերկուս կտորս բաժանելով, զի ամուր մնասցէ զկազմն, եւ զբարձողացսն դիւր, եւ զխորագիրսն նորոգելով, եւ գթղթերաց մուրսն սրբրելով։ Նաեւ զԱզարիայի ամիսքն ընդ եղեալ յերկուց ամսոցն լծորդ, ըստ իւրաքանչիւր աւուրց ընդ լուսանցսն եղեալ, եւ այբբենական ցանգքն շինեցեալ եւ գրեցեալ յերից անուանց ամսոց, որք են Հայոց, Հոռոմայեցւոց եւ Ազարիային, ըստ իւրաքանչիւրոց յիշեցեալ հատորուջ կից կազմեցաք, զի ամուր մնասցէ, եւ դիւրեաւ գրտանիցեն ընթերցողքն, եւ մի՝ տարակուսեսցին իբրեւ զիս։ Նաեւ զԳարոն Վարդան հանգուցեալ Երեմիէ ընդ արեանակցացն վերջին ստացողի գրքույս, յիշեցաք եւ գրեցաք զորս Տէր օրհնեսցէ, զհանգուցեալսն եւ զկենդանիսն, ամէն։ Եւ ես յուսամ, այո՞ եւ աղաչեմ, զի սիրովն յԱստուծոյ, խնամով պահել զսուրբ գիրքս յերկու հատոր, որ ի յաւարտել յառաջնոյն, յերկրորդ կտորն կը սկսանի, որպէս տեսանի, եւ հանապազ ընթեռնուլ մաղթեմ, ի սուրբ յեկեղեցւոջ, եւ ակնկալնուլ յուսով եւ հաւատով, վարձուց հատուցման։ Ըստ այնմ թէ ոսնասէրն չէ զրկած ի պսակաց մարտիրոսաց, այլ է հաղորդ նոցին փառաց, առանց դանից եւ տանջանաց, ի Քրիստոսէ է պսակած։ Ողջ լերուք։

(Տարբեր գիր և թանաք).

Եղեւ յամի կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի, 1801 ի սեպտեմբերի մուտն, եւ փոքրն Ազարիայի 186 Նադար ամսոյ 15-ին, ի Սուրաթ նահանգոջ։ Ներգեւեալ ծառայ Զաքարիայ իբր պաշտակ Տէր Պետրոսեան Մէլքումեան Պողեանց նոր ջուղայեցոյ, եւ ի Սուրաթոջս բնակեալ։

№ 89

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Թերթերը՝ 394։— Պրակները՝ 33, յուրաքանչյուրը 12 թերթից։— Մեծությունը՝ 32,3×23×6,3 սմ.։— Նյութը՝ դեղնած թուղթ։— Կազմը՝ կարտոն, դեղնագույն կտորով պատած։— Վիճակը՝ անբավարար, սկզբից (մոտ տասը պրակ) և վերջից թերի, միջին թերթերը քայքայված, որոշ թերթեր հետագայում նորոգված սպիտակ թղթով։— Գրությունը՝ երկսյուն։— Տողերը՝ 35։— Գծումները՝ ճնշումով։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրություն՝ կան բազմաթիվ լուսանցազարդեր, 146ա և 308ա թերթերում կիսախորաններ և թռչնագրեր։— Գրիչը՝ Տեր Գրիգոր։— Պատվիրատուները՝ Հակոբ, Տեր Դավիթ, Սիմաոն, Տեր Գրիգոր, Պետրոս, Մկրտիչ և այլն։— Ժամանակը՝ 17—18 դար։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1բ.— Սոցին սուրբ աղաւթիւքն ողորմեսցի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս Յակոբին եւ կողակցին՝ Խաթնաղին, եւ որդոցն Եղիին, Նիկողոսին, Զաքարին, Մարտիրոսին եւ ծնօղացն Եղիին եւ Հայպաթին, կ(ա)ր(դացողիս)։

Թ. 3բ.— Սորին բարեխաւսութեամբ յՏէր Յիսուս ողորմեա ստացողի սուրբ գրոցս Տէր Դաւթին եւ կողակցին, եւ ծնօղացն Տէր Անդոնին եւ Նուկպարին, եւ որդոցն Առաքելին եւ Անդոնին, եւ եղբարցն Աղազարին, Յովսէփին, Հա(յ)րապետին, Աւանէսին, Քաղպաթին, կարդացողիս եւ լս(ողիս)։

Թ. 5ա.—...ողորմեայ Տէր Աստուած Յիսուս Քրիստոս համարէն հաւատացեալ քրիստոնէից, եւ առաւել ստացողի սուրբ գրոցս՝ Սիմաւունին եւ կողակցին, եւ որդոյն Աղին, Ղազարին, Կուզինին, եւ ծնօղացն՝ Աղազարին եւ Մարիամին, եւ եղբարցն Տէր Մա(տ)թէոսին եւ Եսային, կարդացողիս։

Թ. 7ա.— Որ եւ նոյն ողորմութեամբն զմեզ նորոգեսցէ Քրիստոս Աստուած ամենայն աղտոյ մեղաց, մանաւանդ զստացող գրոցս Տէր Մա(տ)թէոսին եւ կողակցին, եւ որդոցն Զաքարին, Խաթունբեկին, Աղսբետին, Փարին եւ ծնօղացն՝ Աղազարին եւ Մարիամին, եւ եղբարցն Սիմաունին եւ Եսային, եւ քերցն ամենեցուն, կ(ա)ր(դացողիս)։

Թ. 8ա.— Մաղթանաւք սոցայ Քրիստոս Աստուած ողորմեա ստացողի սուրբ տառիս՝ Եսային եւ կողակցին Մարգարիտին, եւ որդոյն Մուրատին, Ղազարին, եւ ծնօղացն Աղազարին եւ Մարիամին, եւ եղբարցն Սիմաունին, Տէր Մա(տ)թէոսին, կարդացողիս։

Թ. 9ա.—...եւ ընդունող սորայ յիշեայ, զՏէր Կարապետին և կողակցին Պաղտատին, եւ որդոյն Մկրտչին, Պետրոսին, Սարգսին և Գրիգոր Գրչիս, եւ ծնօղացն Տէր Գրիգորին եւ Յուստիանին, կ(ա)ր(դացողիս)։

Թ. 10բ.— Մանաւանդ ստացողի սուրբ գրոցս Տէր Գրիգոր գրչիս եւ ծնօղաց իմոց, Տէր Կարապետին եւ Պաղտադին, եւ կողակցին իմոյ Փարին, եւ որդոյն Մարգարին, եւ դստերն Ըստիանին, եւ եղբարցն իմոց Մկրտչին, Պետրոսին, Մարտիրոսին, Գրիգորին, Սարգսին, կ(ա)ր(դացողիս)։

Թ. 12ա.—... Ողորմեա Տէր Աստուած ստացողի գրոցս Պետրոսին եւ կողակցին Խաթունին, եւ որդոյն Պօղոսին, եւ Գալուստին, եւ Ազարիին, եւ դստերն Մարիամին, Աղսբետին, Սայիփին, Փարին, եւ ծնօղացն Աւանէսին եւ Մարիամին, եւ եղբարցն Պօղոսին, եւ քերցն ամենեցուն, կ(ա)ր(դացողիս)։

(Այսպես շարունակաբար ամեն մի պարբերության վերջավորության հիշվում են նույն անձերի անունները։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 307բ.— Կարդացողաց եւ լսողաց, ժամոց տվողաց, խո(ւ)նգն եւ մումապատ բերողաց, յիշատակ արվողաց, յԱստուած եւ ձեզ ողորմեսցի, ամէն։ (Ապա նույն գրիչը նույն թանաքով գրել է ներքևում հինգ տող, վրացերեն լեզվով)։

№ 90

ՈՍԿԵՓՈՐԻԿ

Թերթերը՝ 205։— Պրակները՝ 18, յուրաքանչյուրը 12 թերթից, բացի առաջինը՝ 6 թերթից և տասնյոթերորդը՝ 7 թերթից։— Մեծությունը՝ 20,3×14,5×3,3 սմ.։— Նյութը՝ դեղնած հաստ թուղթ։— Կազմը՝ չունի։— Պահպանակներ՝ չկան։— Վիճակը՝ առաջին և վերջին պրակները քրքրված են և պակաս։— Գրությունը՝ երկսյուն։— Դատարկ թղթեր՝ 126բ և 127ա։— Տողերը՝ 27։— Գիրը՝ նոտրգիր։— Զարդագրություն՝ վերնագրերը և պարագրաֆների սկզբնատառերը կարմիր թանաքով։— Ժամանակը՝ 16—17-րդ դար։

Սկզբից թերի է։ Ամբողջական մնացել է միայն երրորդ գիրքը՝ «Սկիզբն երրորդ գրոց ապականութեան մեղաց» և չորրորդ գիրքը՝ «Յաղագս մարդեղութեանն Քրիստոսի»։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 34բ.— Մի մեղադրիր եղբայր գրիս, գրիչս փոխման էր։

(Շարունակելի)